ՄՈՐ ՀԱՎԱՏՔԸ

ԵԼ. 2:1-11

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Այնտեղ էր գտնում Ղևիի ցեղից մի մարդ (Ամրամ), որն ամուսնացավ Ղևիի դուստրերից
մէկի (Հոքաբեթ) հետ: 2 Սա հղիացավ ու ծնեց մի արու զավակ: Տեսնելով, որ նա գեղեցիկ
է, երեք ամիս թաքցրին նրան: 3 Երբ այլևս չէին կարող նրան թաքցնել, նրա մայրն առավ
եղէգից հյուսուած մի տապանակ, այն ծեփեց կպրածյութով, դրա մէջ դրեց մանկանը և
զամբյուղը դրեց ծանծաղուտ մի տեղ, գետափին մօտիկ: 4 Մանկան քույրը հեռվից
հետևում էր՝ տեսնելու համար, թէ ինչ կը պատահի նրան: 5 Այդ ժամանակ էր, որ
փարաւոնի դուստրն եկաւ գետում լողանալու, իսկ նրա աղախինները քայլում էին գետի
ափով: Ծանծաղուտի մէջ զամբյուղ նկատելով՝ նա մի աղախին ուղարկեց, որ վերցնի այն: 6
Նա բացեց և տեսաւ երեխային: Երեխան լաց էր լինում զամբյուղում: Փարաւոնի
դուստրը, խղճալով նրան, ասաց. Եբրայեցիների երեխաներից է դա: 7 Մանկան քույրն
ասաց փարաւոնի դստերը. Ուզո՞ւմ ես, որ եբրայեցիներից մի դայեակ կին կանչեմ, նա թող
կերակրի այդ մանկանը: 8 Փարաւոնի դուստրն ասաց՝ գնա՛: Աղջիկը գնաց ու կանչեց
մանկան մօրը: 9 Փարաւոնի դուստրը նրան ասաց. Վերցրո՛ւ այդ մանկանը և կերակրի՛ր
նրան ինձ համար: Ես կը տամ քո վարձը: Կինը վերցրեց մանկանը և կերակրեց նրան: Երբ
մանուկը մեծացաւ, կինը նրան բերեց փարաւոնի դստեր մօտ, 10 և մանուկը նրան որդեգիր
դարձաւ: Նա նրան Մովսէս կոչեց ասելով՝ ջրից եմ հանել նրան:

11 Շատ օրեր հետո, երբ Մովսէսը մեծացաւ, գնաց իր ազգակիցների՝ իսրայէլացիների մօտ,
ականատես եղաւ նրանց չարչարանքներին: Նա նկատեց, որ մի եգիպտացի ծեծում էր իր
եբրայեցի եղբայրներից մէկին՝ մի իսրայէլացու:

I. ՄԱՅՐ, ՈՐ ՀԱՎԱՏՈՒՄ ԷՐ ԻՐ ՈՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

3 Երբ այլեւս չէին կարող նրան թաքցնել, նրա մայրն առավ եղէգից հյուսուած մի տապանակ, այն ծեփեց կպրաձյութով, դրա մէջ դրեց մանկանը եւ զամբյուղը դրեց ծանծաղուտ մի տեղ, գետափին մօտիկ:

Եբր. 11:23 - 23 Հաւատքով Մովսէսը երբոր ծնվեց՝, նրա ծնողները երեք ամիս թաքցրին նրան, քանզի տեսան կայտառ մանկանը եւ չվախեցան թագաւորի հրամանից:

- Ծննդ. 26:35 - 35 Եւ սորանք Իսահակի և Ռեբեկայի համար հոգու դառնություն եղան:

II. ՄԱՅՐ, ՈՐ ՍԵՐՄԱՆԵՑ (ՓՈԽԱՆՑԵՑ) ՀԱՎԱՏՔԸ ԻՐ ՈՐԴՈՒ ՄԵՋ:

*9 Փարաւոնի դուստրը նրան ասաց. Վերցրո՛ւ այդ մանկանը եւ կերակրի՛ր նրան ինձ համար: Ես կը տամ քո վարձը: Կինը վերցրեց մանկանը եւ կերակրեց նրան: Երբ մանուկը **մեծացավ**. կինը նրան բերեց փարաւոնի դստեր մօտ.*

Եբր. 11:24 - 24 Հավատքով Մովսէսը երբոր մեծացավ՝ *չկամեցավ Փարաւոնի աղջկա որդի կոչվել:*

- ***2 Տիմ. 1:5 - 5*** *Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը որ քեզանում է. որ առաջ քո Լօիդա տատումը եւ քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած եմ որ քեզանում էլ:*

III. ՄԱՅՐ, ՈՐ ՀԱՎԱՏՔՈՎ ԱՐՁԱԿԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ ՎՍՏԱՀԵԼՈՎ ԱՍՏԾՈ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ:

9 Երբ մանուկը մեծացավ. կինը նրան բերեց փարաւոնի դստեր մօտ.

Եբր. 11:24,27-29 - 24 Հավատքով *Մովսէսը երբոր մեծացավ՝ չկամեցավ Փարաւոնի աղջկա որդի կոչվել:*

27 ***Հավատքով*** *թողեց նա Եգիպտոսը* ***չվախենալով*** *թագավորի բարկությունից. որովհետեւ համբերեց՝ Անտեսանելուն տեսնողի պէս:*

28 ***Հավատքով*** *արավզատիկը եւ արյունի սրսկումը. որ առաջինեկներին սատակիչը չմօտենա նորանց:*

29 ***Հավատքով*** *անցան Կարմիր ծովովն ինչպէս ցամաքով. որի փորձն Եգիպտացիներն անելիս խեղդուեցան:*